ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«09» Մարտի 2026թ. N ՄՈ/ 125 - Ա

ք. Արմավիր

«ՀՈՎՏԱՄԵՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԻԱՆՆԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ ԷՍՏՈՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով, հիմք ընդունելով Տալլինի համալսարանի կրթական գիտությունների դպրոցի վերապատրաստման համակարգողի 2026 թվականի հունվարի 30-ի հրավերը և «Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիաննա Նավասարդյանի 2025 թվականի նոյեմբերի 11-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ‹‹«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն›› հիմնադրամի, Հայաստանում Էստոնիայի միջազգային համագործակցության կենտրոնի (ESTDEV), ինչպես նաև Էստոնիայի կրթական գիտությունների ինստիտուտի և Տալլինի համալսարանի հետ համատեղ իրականացվող ‹‹Ապագայի առաջնորդ›› ուսումնական ծրագրին մասնակցելու նպատակով.

ո ր ո շ ո ւ մ ե մ՝

1. «Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիաննա Նավասարդյանին, վարձատրության պահպանմամբ, 2026 թվականի մարտի 30-ից ապրիլի 10-ը ներառյալ գործուղել Էստոնիայի Հանրապետություն:
2. Լիաննա Նավասարդյանի գործուղման մեջ գտնվելու ժամանակահատվածում «Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Արփիկ Ավագյանին:
3. 2026 թվականի մարտի 30-ից ապրիլի 10-ը ներառյալ «Հովտամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Արփիկ Ավագյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Լիաննա Նավասարդյանի՝ Էստոնիայի Հանրապետություն գործուղման ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:
5. Լիաննա Նավասարդյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի ապրիլի 13-ից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**